



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



«30» 05 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 069 - 24

Նախաձեռնող՝

Քաղաքացի Յու.Աֆրիկյան  
Ք. Երևան, Մ. Մելիքյան փ. 5շ. 24 բն.

Գործունեությունը՝ Մասիս քաղաքի Մասիս կայարան Սայթ-Նովա փողոց 30 հասցեում պահեստային մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ  
Արարարի մարզ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 069 - 24

«30» Տպիսիս 2024թ.

**Մասիս քաղաքի Մասիս կայարան Սայաթ - Նովայի փողոց 30 հասցեում նախատեսվող պահեստային մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	Քաղաքացի Յու. Աֆրիկյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք

**Ներածական մաս.** Քաղաքացի Յու. Աֆրիկյանի կողմից Մասիս քաղաքի Մասիս կայարան Սայաթ - Նովայի փողոց 30 հասցեում նախատեսվում է կառուցել պահեստային մասնաշենք՝ կենցաղային տեխնիկայի պահեստավորման համար:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման N 13012021-03-0038 վկայականը /ծածկագիրը՝ 03-003-0443-0018/ և Մասիս համայնքի կողմից 2023թ. մայիսի 19-ին տրամադրված N CPP0-0000-6117 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականության: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2.85 հա:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության /այսուհետ՝ պահեստային մասնաշենք/ հողամասը գտնվում է Կայարան Սայաթ - Նովա փողոց 30 հասցեում: Տարածքը հարթ է, ծանրաբեռնված է երեք շինությունով՝ 90.8 մ<sup>2</sup> մակերեսով ապամոնտաժման ենթակա վարչական շենք, նոր կառուցվող և վերակառուցվող 4081մ<sup>2</sup> ընդհանուր մակերես ունեցող շինքեր: Հողամասի հարևանությամբ գտնվում են «Գրանդ Մաստեր» ՍՊԸ-ի արտադրական տարածքը /900մ/, արտադրական և կառուցապատումից ազատ տարածքներ /90մ/, բնակելի տներ /80մ/ և կիսաքանդ արտադրական տարածքներ /40-50մ/:

Ծառափուտային բուսականությունը տարածքում բացակայում է, տարածքը քարքարոտ է, տեղ-տեղ բետոնապատ, հողի բերրի շերտ բացակայում է:





Հիդրոերկրաբանական տեսակետից տվյալ տեղամասերում գրունտային ջրերը գտնվում են մոտ 3.8-5.0 մ խորությամբ: Դրանք բավական բարձր տեղադրում ունեն և մաս են կազմում Արարատյան արտեզիան ավազանի:

Տարածաշրջանի կլիման չափավոր տաք է: Ամառը շոգ է, չոր, ձմեռը տևական է և համամատաբար տաք, ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 10 սմ:

Պահեստային մասնաշենքի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- Հողի ընդհանուր մակերես՝ 28500 մ<sup>2</sup>,
- Կառուցապատման մակերես՝ 6973.4 մ<sup>2</sup>,
- Կանաչապատման մակերես՝ 5707 մ<sup>2</sup>,
- Բարեկարգման մակերես՝ 11738.6 մ<sup>2</sup>
- Կառուցապատված մակերես՝ 4081 մ<sup>2</sup>:

Նախատեսվող պահեստային մասնաշենքը լինելու է մեկ հարկանի՝ 7.2 մետր բարձրությամբ երկաթբետոնե սյունահեծանային կոնստրուկցիայով, արտաքին պատերը երեսպատվելու են տուֆի երկտակ կանոնավոր շարվածքով՝ սեյսմիկ կարով: Շինության ներսում նախատեսվում է պահակակետ, սանհանգույց և օժանդակ սենյակ: Պահեստային մասնաշենքի օդափոխությունն իրականացվելու է բնական եղանակով: Տանիքը նախատեսվում է ծալքաթիթեղով՝ արտաքին ջրահեռացմամբ, պատերը և հատակը պատված է լինելու ջրակայուն և հրակայուն նյութերով: Հիմքերի խորությունը նախատեսվում է առավելագույնը 1մ՝ հաշվի առնելով գրունտային ջրերի հորիզոնների բարձրությունը:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ շինարարական աշխատանքները տևելու են 12 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ բուլդոզեր, օդադողային էքսկավատոր՝ 2 հատ, ավտոկոունկ 2 հատ, բեռնատար ինքնաթափ և այլն: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չեն պահեստավորվելու:

Շինարարության ընթացքում օգտագործվող շինանյութերը պահեստավորվելու են շինանյութերի համար նախատեսված ժամանակավոր պահեստներում կամ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով: Բետոնը մատակարարվելու է պատրաստի վիճակով, մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման և աշխատողների կոմունալ կենցաղային կարիքների համար:

Նախատեսվող գործունեության տարածքում ջրամատակարարման ցանցի բացակայության հետևանքով ջրամատակարարումն իրականացվելու է ավտոցիստեռներով, լիցենզավորված կազմակերպության միջոցով՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարության ընթացքում օգտագործվող ջրի ծախսը կկազմի 5194.4 մ<sup>3</sup>/շին. ժամ: Ջրահեռացման համար նախատեսվում է կառուցել անջրթափանց սեպտիկ հոր: Կեղտաջրերի հեռացումն իրականացնելու է մասնագիտացված մեքենայի օգնությամբ:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է շինարարական հրապարակին կից տեղադրել պլաստմասե պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և անիվների լվացման ջրերը: Պարզարանում տեղի կունենա





մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

Շինարարական հրապարակում տեղադրվելու է հրդեհաշիջման վահանակ՝ կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով:

Շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում պահեստային մասնաշենքի էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի:

Տարածքում գազամատակարարման ցանցի բացակայության հետևանքով՝ ջեռուցման համար նախատեսվում է կառուցել 684 մ<sup>2</sup> մակերեսով փայտանյութով աշխատող կաթսայատուն: Որպես փայտանյութ օգտագործվելու է ներմուծվող կենցաղային տեխնիկայի համար նախատեսված տակդիրները: Օգտագործվող տակդիրները բնական՝ չմշակված, ոչ լաքապատ կամ ոչ յուղապատ փայտից են: Որպես այլընտրանքային վառելիք հնարավոր է օգտագործել նաև փայտի թեփ:

Կաթսայատունը նախատեսվում է կահավորել 2 հատ 1000 կՎտ դրվածքային հզորությամբ СПК-1000 մակնիշի կաթսաներով: Վառելիքի ծախսը կազմում է 253 կգ/ժամ, մեկ հատ 1000 կՎտ դրվածքային հզորությամբ կաթսան նախատեսված է 10000 քմ-ի համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է բարեկարգում՝ ասֆալտապատման, սալապատման տեսքով և կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու է՝ համաձայն Մասիսի համայնքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի՝ խոտածածկի /գազոն/ և ծառերի տեսքով, որպես ծառատեսակ ընտրվել է բարդի՝ 20-25 հատ :

Կանաչապատ տարածքի ոռոգման նպատակով ջրամատակարարումն իրականացվելու է ավտոռոգիստեղնրով, լիցենզավորված կազմակերպության միջոցով՝ պայմանագրային հիմունքներով: Կանաչապատ տարածքի 1 մ<sup>2</sup>-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսը ըստ նորմայի կկազմի 4-6 լ / մ<sup>2</sup>:

Շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001 00 4 /՝ 0.7 տ/տարի, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101 00 4/՝ 980 մ<sup>3</sup>, ինչն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող /ծածկագիրը՝ 31401100 08 99 5/՝ 464 մ<sup>3</sup> ծավալով՝ կտեղափոխվի Մասիսի համայնքապետարանի կողմից հատկացված վայր, փայտանյութի մոխիր /ծածկագիրը՝ 31300600 11 99 5/՝ 0.8 տ/տարի:

Պահեստային մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղղված մոնիթորինգ:

> մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

> փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ հաճախականությամբ,

> օգտագործված մեքենայական յուղերով ու քայուղերով հողերի հնարավոր





աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

➢ աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

➢ շինհրապարակի որակի, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկումներ,

➢ շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,

➢ շինարարական հրապարակում արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում,

➢ թափոնների տեղափոխման կազմակերպում՝ ըստ համապատասխան պայմանագրերի,

➢ հակահրդեհային պահանջների՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերի պատասխանատվության ապահովում:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 700000 ՀՀ դրամ:

**Պարճառարանական մաս.** Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նախատեսվող պահեստային մասնաշենքի կառուցման նախագծի հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Մասիսի մարզպետարանն, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժինները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ըստ գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ շինարարական աշխատանքների ազդեցություններն իրենց բնույթով սահմանափակ են, կարճատև և կրում են ժամանակավոր բնույթ:

### Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է փոխել հողամասի գոռճառնական նշանակությունը ՀՀ օրենքով սահմանված կարգով:

- Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

- Պահեստային մասնաշենքը շահագործել միայն հայտով նախատեսված կենցաղային տեխնիկայի պահեստավորման համար:

- Բետոնի առաքումն իրականացնել՝ բացառելով շինարարական գործունեության ենթակա տարածքի սահմաններում կամ դրանից դուրս բետոնաջրերի արտահոսքը:

- Տարածքի կանաչապատումն իրականացնել՝ համաձայն Մասիսի համայնքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և



կանաչապատման» նախագծի, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 20.04.2002 թ. N 438 որոշման 43-րդ կետի, որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Մասիս քաղաքի Մասիս կայարան Սայաթ -Նովայի փողոց 30 հասցեում նախատեսվող պահեստային մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ



Ռուզան Մակինյան